Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ ԹԻՎ 80-Ա, 81-Ա, 82-Ն, 83-Ա, 86-Ն, 88-Ա, 89-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 80-Ա, 81-Ա, 83-Ա և 89-Ա որոշումների տեքստի վերջում գրված է կողմ՝ 8, սակայն առկա է 7 ավագանու անդամի ստորագրություն:

Թիվ 82-Ն որոշման N2 հավելվածի 7.1 կետում հարկավոր է կիրառել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վճարներից միայն մեկը, բացի այդ հավելվածի 7-րդ կետի դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 82-Ն որոշման N2.1 հավելվածը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասին:

Թիվ 86-Ն որոշումը ու կից ներկայացված «հատվածները» և 88-Ա որոշման «աշխատանքային պլանը» անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասին:

30.01.2020թ.